գործողություններ չեն կատարվել, ուստի Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստարկները չեն կարող քննարկման առարկա դարձվել և դրվել սույն գործով ներկայացված հայցապահանջի բավարարման կամ մերժման հիմքում, քանի որ դատարանը պարտավոր է ***քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա և քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում***:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ «Միքնար» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/21» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է մերժման:

-

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես կատարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի վճարումն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Միքնար» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/21» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE6E-4A9C-4337-B0F1 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am